

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 35/2

26 դեկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Շտրիխ+» ՍՊԸ 11.12.2014 թ-ի գրությամբ բերված գանգատը՝ ավելացված արժեքի հարկի վճարման հաշվետու ժամանակաշրջանը սխալ ընտրելու հետևանքով կիրառված պատասխանատվության միջոցները վերանայելու վերաբերյալ:

«Շտրիխ+» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

«Շտրիխ+» ՍՊԸ-ն (այսուհետ նաև Ընկերություն) 2013 թ-ին ունեցել է 81,691,664 դրամի հասույթ և հանդիսանալով ԱԱՀ վճարող 2014 թ-ի հունվարից ներկայացրել է ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ, որոնք ընդունվել են հարկային մարմնի կողմից և ամսական կտրվածքով Ընկերության կողմից վճարվել են տվյալ հաշվարկներով վճարման ենթակա հարկերը:

Ընկերության գրանցման վայրի հարկային տեսչության կողմից կազմված կամերալ ուսումնասիրությունների 22.10.2014 թ-ի արձանագրությամբ առաջարկվել է 2014 թ-ի համար ներկայացնել ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկներ, քանի որ 2013 թ. հասույթը պակաս է եղել 100 մլն դրամից:

Ընկերության կողմից 01.12.2014 թ-ին ներկայացվել են ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկները, որի արդյունքում, որպես հաշվետու ժամանակաշրջանի (եռամսյակի) համար ուշ ներկայացված հաշվարկներ կիրառվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցները: Արդյունքում, համաձայն Մաշտոցի հարկային տեսչության 09.12.2014 թ-ի փոխադարձ հաշվարկների տեղեկանքի, Ընկերության անձնական հաշվի քարտում հաշվեգրվել է 4,679,416 ՀՀ դրամ տուգանք, որը, ըստ հաշվետու եռամսյակների մասնակիորեն մարվել է ԱԱՀ-ի փաստացի ամսական վճարումների գումարներից, և որպես դրա արդյունք, ըստ հաշվետու եռամսյակների ավտոմատ ձևավորվել է նաև ապառքի մեծություն, որի գծով հաշվարկվել է 397,931 ՀՀ դրամ տույժ:

Լիարժեքորեն ընդունելով, որ 2014 թ-ի ԱԱՀ-ի հաշվետու ժամանակաշրջանի իմաստով Ընկերության կողմից չեն պահպանվել ԱԱՀ-ի հաշվարկների ներկայացման հաշվետվական պահանջները (եռամսյակային հաշվարկների փոխարեն ներկայացվել են ամսական հաշվարկներ), Ընկերությունը, ըստ էության, ԱԱՀ-ի անվամբ և ձևաչափով հաշվարկները հանձնել է ավելի հաճախ, քան սահմանված է, բովանդակային առումով կատարել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի գ) և դ) կետերով նախատեսված իր պարտականությունները՝ վճարումները կատարելով ավելի շուտ, ժամկետանց պարտավորություններ իր գործունեության ընթացքում չի ունեցել և որպես վերոնշյալի արդյունք ՀՀ պետական բյուջեին վնաս չի հասցրել:

Միաժամանակ հարկ տեղեկացնել, որ ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկների ներկայացման արդյունքում, դրանցով ներկայացված ԱԱՀ-ի պարտավորության ընդհանուր գումարը համապատասխանել է ԱԱՀ ամսական հաշվարկների միջոցով ձևավորված պարտավորությունների հանրագումարին:

Հաշվի առնելով, որ ամսական հաշվետվությունների ներկայացման պարագայում Ընկերության կողմից բովանդակային առումով կատարված են եղել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի հիմնարար պահանջները, և պարզապես տեղի է ունեցել մեխանիկական անճշտություն, որի արդյունքում պետական բյուջեին վնաս չի հասցվել, ուստի առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով ընկերությունը խնդրում է չձանրաբեռնել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 24-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության միջոցներով:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Շտրիխ+» ՍՊԸ կողմից ղեկավարվելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի դրույթներով, այն է՝ 2013 թ-ին իրացման շրջանառությունը գերազանցել է ԱԱՀ-ի շեմը, 2014 թ-ի հունվար ամսից հարկային մարմին ներկայացվել են ավելացված արժեքի հարկի ամսական հաշվարկներ: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերության 2013 թ-ի իրացման շրջանառությունը չի գերազանցել 100 մլն դրամը, հետևապես ղեկավարվելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով, պետք է ներկայացվեին ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկներ: Ընդ որում, հարկային մարմինը միայն 2014 թ-ի հոկտեմբեր ամսին է ընկերությանը տեղեկացրել վերջինիս համար ավելացված արժեքի հարկի վճարման հաշվետու ժամանակաշրջանը յուրաքանչյուր եռամսյակը համարվելու մասին: Արդյունքում, ընկերության նկատմամբ կիրառվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 24-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության միջոցները:

Քննարկվող դեպքում հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ ավելացված արժեքի հարկի հաշվարկներն ընկերության կողմից ամսական կտրվածքով ներկայացվել են թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է, այսինքն՝ թույլ տրված խախտումը, ըստ էության, կրում է ձևական բնույթ, քանի որ ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով, կատարված են: Մասնավորապես, ավելացված արժեքի հարկի հաշվարկները յուրաքանչյուր եռամսյակի համար ներկայացվելու փոխարեն յուրաքանչյուր ամսվա համար ներկայացվելու պայմաններում ընկերության ԱԱՀ-ի գծով պարտավորությունների չափը, գումարային առումով, չի փոփոխվել, և դրա հետևանքով բյուջե պակաս ԱԱՀ-ի գումար չի վճարվել: Հետևապես, քննարկվող

դեպքում կիրառելի են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթները:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ «Շտրիխ+» ՍՊԸ 11.12.2014 թ-ի գրությամբ բերված գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

«Շտրիխ+» ՍՊԸ 11.12.2014 թ-ի գրությամբ բերված գանգատը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ